

վրայ շինուած է(*) մատուռ մը: Պարսից յարձակում-
ներէն քանդուեցաւ այս մատուռը, եւ վերաշինուե-
ցաւ Մոսեստոսի կողմէ. նոյն ժամանակէն սկսեալ կը
պահէ իր ձեւը եւ համեմատութիւնները. խաչակիրք
միացուցին զայն ընդհանուր սրբավայրին հետ:

Գողգոթան երկու սեղան ունի, քառանկիւնի սիւ-
նով մը զատուած, հարաւային կողմի սեղանին առ-
ջեւը կը կոչուի Տարածման սեղ, զարդարուած ծաղ-
կանկար քարերու հիւսուածքով մը, հոս էր որ Փըը-
կիչը տարածեցին խաչին վրայ, այս տեղը Փրանկաց
կը վերաբերի: Գողգոթայի երկրորդ մասն Տարած-
ման տեղւոյն նոյն կերպաձեւութիւնը ունի, հոս էր որ
Խաչափայտին վրայ բեւեռեցին մեր Փրկիչը եւ անոր
երկու կողմերը՝ մին աջ եւ միւսը ձախ խաչեցին երկու
աւազակները: Արգուլֆ եպիսկոպոս կը գրէ. «Շատ
կանուխէն Գողգոթայի ժայռին զանգուածը արեւմտ-
եան գաւթին մէջ գրեթէ հինգ մէթր բարձր էր, եւ
վրան կը բարձրանայ թանկագլին խաչ մը եւ այնպէս
կը նկատուէր թէ հոն էր Քրիստոսի մեռած տեղը» եւ
կ'աւելցնէ թէ իր այցելութեան ժամանակ տեսած էր
Գողգոթայի վրայ երկյարկանի մատուռ մը, եւ կ'են-
թադրէ թէ անոր վրայ տնկուած արծաթեայ խաչը նոյն
խակ Քրիստոսի խաչին տեղին վրան էր(**): Քրիստո-
սի Ս. Գերեզմանին բոլոր սրբութիւնները հին ժամա-

(*) Գողգոթայի շինութեան մասին կը գտնուի հետեւեալ աւանդու-
թիւնը.

«Սուրբ Գողգոթայն մինչ շինեցին

Կաթամբ զկիր շաղախեցին

Ձի զՏէրն մեր անդ խաչեցին

Եկայր ելցուր ի Գողգոթա» (Գով. էջ 3):

(**) Արեւելիի Քրիստոսնէից մէջ երկար ժամանակ այն կարծիք